74-ՐԴ ՆԻՍՏ

11 մարտի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 7-ին՝ նախագահությամբ *Տեր-Խաչատրյանի.* մինիստրական օթյակում են ներքին գործոց, արտաքին գործոց, խնամատարության և իրավարարության մինիստրները, ներքին գործոց, խնամատարության ու ֆինանսների մինիստրների օգնականները:

Ն. Աղբալյան - Կարդում է նախորդ նիստում ընդունված քաղաքային վարչությանը, դպրոցների և միլիցիայի կարիքները հոգալու համար նպաստ տալու օրինագիծը խմբագրած ձևով:

Մինիստր-նախագահի պաշտոնակատար - Զեկուցում է երկու շաբաթվա ընթացքում երկրում տեղի ունեցած անցուդարձի մասին:

Զոդ գյուղում (Բասարգեչար) թուրքերն սպանել են 11 հայ զինվոր և 4 սպա՝ իրենց զինվորական պարտականությունները կատարելու միջոցին. նույնպիսի դժբախտ դեպք տեղի է ունեցել և Դավալու-Ջնջռլու ճանապարհի վրա, սպանված են թուրքերի ձեռքով 12 հայեր:

Թե՛ առաջին և թե՛ վերջին դեպքերի համար կարգադրված է խիստ քննություն կատարել և գտնել մեղավորներին՝ առանց ձեռք տալու խաղաղ բնակչության: Քննիչ հանձնախմբերին թույլ չեն տալիս թուրքերը մոտենալ գյուղերին՝ կրակ բաց անելով նոցա վրա: Որոշված է ամեն միջոց գործ դնել խաղաղ ճանապարհով ոճրագործությանց հեղինակներին գտնելու, իսկ եթե բոլոր այդ միջոցները կսպառվեն, կառավարությունն այն ժամանակ ստիպված կլինի ուժի դիմելու, յուր իրավունքը և պետության օրենքները ուժով պաշտպանելու:

Այդ դեպքերն, ինչպես և մի շարք այլ դեպքեր ու գործողություններ թուրքերի կողմից թե՛ հայկական կառավարության և թե՛ անգլիական հրամանատարության բերել են այն եզրակացության, որ Անդրկովկասում մի տեսակ արտակարգ շարժում կա և որ այդ շարժումը ղեկավարում է մի ձեռք, որ Պոլսումն է:

Մինիստրական կազմի մեջ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. ես ստանձնելով Մինիստր-նախագահի պաշտոնակատարի պաշտոնը, ներքին գործոց մինիստրի պաշտոնակատար եմ նշանակել օգնականներիցս մեկին՝ Ս. Մանասյանին, մյուս օգնականս Հ. Յաղջյանն է, որ շուտով կգա Թիֆլիսից, պարենավորման մինիստր է նշանակված Ք. Վերմիշյանը, խնամատարության՝ Ս. Թորոսյանը, սրան օգնական՝ բժ. Տեր-Միքայելյանը:

Մինիստրական խորհուրդը մի շարք օրինագծեր է մտցրել խորհրդարան, որոնց լուծմանը սպասում է կառավարությունը՝ որոշ օրգանական ու անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

Արտաքին գործոց մինիստր - Զեկուցում է մեզ համար ձեռնտու պայմաններով կայացած հայ-վրացական համաձայնության, Ախալքալաքի գավառում տեղի ունեցած թուրք-վրացական ընդհարումների մասին:

Փարիզի հայկական պատվիրակությունից առայժմ ստացված է երկու հեռագիր, որոնցով նա հայտնում է, որ արդեն ինքը հասել է Փարիզ և ունեցել է մի շարք տեսակցություններ դաշնակիցների ներկայացուցիչների հետ:

Հայաստանի կառավարությունը բողոքել է նախ՝ Ադրբեջանի կառավարությանը, որ բռնությամբ ուզում է Ղարաբաղը կցել Ադրբեջանին և հիմնում է այնտեղ գեներալ-նահանգապետություն, ապա՝ նույն հարցի առթիվ գեներալ Թոմսոնին հիշեցնելով, որ արդեն ժողովուրդներին ինքնորոշվելու իրավունք է տրված:

Ադրբեջանի և Վրաստանի կառավարություններին կից Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչներ ունենալու խնդիրը լուծված է. ներկայացուցիչներ նշանակված են արդեն:

Հայաստանի կառավարությունը համաձայնել է Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների կառավարությանց հետ կոնֆերենցիա կազմելու, այդ չորս պետությանց մեջ եղած տարաձայնությունները լուծելու և հարթելու համար:

Հայաստանի կառավարությունը շնորհավորական հեռագիր է ուղղել մարտի 12-ին Թիֆլիսում բացվելիք Վրաստանի Սահմանադիր ժողովի բացման առթիվ:

Հ. Բուդաղյան - Մեր ֆրակցիան առաջարկում է նախագահությանը Վրաստանի Սահմանադիր ժողովի բացման առթիվ շնորհավորել հեռագրով Հայաստանի Խորհրդարանի անունից:

Ավագ քարտուղար - Կարդում է կազմած շնորհավորական հեռագիրը, որ ընդունվում է խորհրդարանի կողմից միաձայն:

Մինիստր-նախագահի պաշտոնակատար - Լրացնում է իր զեկուցումը և շեշտում այն, որ կառավարությունը պատրաստում է օրինագիծ խորհրդարանի ընտրության մասին և մի շաբաթում կներկայացնի խորհրդարանին:

Հ. Բուդաղյան - Խորհրդարանի և քաղաքային ու տեղական ինքնավարությունների ընտրություններին մենք այնքան մեծ նշանակություն ենք տալիս ու

այնքան անհետաձգելի համարում, որ առաջարկում ենք առաջին հերթին դնել այդ երկու օրինագիծը քննության, հակառակ պարագային մենք չենք կարող այդ օրինագծերը չքննած, ուրիշ գործերով զբաղվել և չենք մասնակցի նիստերին:

Բժ. Գրո - Մենք ևս գտնում ենք այդ երկու օրինագծերը անհրաժեշտ և համաձայն ենք, որ քննվեն առաջին հերթին:

Նիստը փակվեց երեկոյան ժ. 9-ին:

«Զանգ», 16 մարտի 1919թ.